քը պատրաստ էր բոլորը ոչնչացնել, որովհետեւ նրանց վրայ գտնուած ոսկին եւ արծաթը իր համար շատ հարկաւոր էին...

Կարօյի անպատկառ խօսքերը մինչ այն աստիճան գրգռում էին իմ բարկութիւնը, որ մի օր մտածեցի՝ խենջարս խրեմ նրա սրտի մէջ, ուր ամենեւին չկար ոչ աստուծոյ երկիւղը եւ ոչ ակնածութիւն դէպի եկեղեցու սրբութիւնները: Բայց ես ո՛ւշ հասկացայ, շա՛տ տարիներից յետոյ, որ իմ կարծիքը Կարօյի մասին բոլորովին սխալ էր, — հասկացայ, որ մի շատ բարի նպատակի համար Կարօն ցանկանում էր գործ դնել վանքերի ոսկին եւ արծաթը...

Թէեւ վանքերը եւ եկեղեցիներն ունէին գաղտնի պահեստներ, ուր խռովութեան միջոցներում թաքցնում էին սուրբ տաճարների հարստութիւնները, բայց շատ անգամ վանահայրը կամ եկեղեցու աւագ քահանան չդիմանալով աւարառուների տոած չարչարանքին, յայտնում էին պահեստի տեղը: Գտնւում էին եկեղեցականներից եւ այնպիսիները, որոնք աւելի հեշտութեամբ աւանդում էին իրանց հոգին, քան թէ պահեստի գաղտնիքը:

Վանքերի եւ եկեղեցիների սրբազան սպասները, արդարեւ, որպէս Կարօն ասում էր, դարձել էին շահասիրութեան առարկայ: Թողեալ այն, որ վարդապետները նրանց շնորհիւ բաւականին արծաթ էին քամում ժողովրդի աղքատ քսակից թողեալ այն, որ ժողովուրդը շատ անգամ ստիպուած էր փրկել իր սրբութիւնները գերութիւնից, պատահում էր, որ երկրի իշխանը — ի հարկէ, չնչին պատճառի համար — վանքը, եկեղեցին կամ ամբողջ հայոց գիւղորայքը տուգանքի էր ենթարկում: Պատճառները հնարում էին իրանք՝ իշխանները: Օրինակ, լուր էին տարածում, թէ հայոց քահանաները մի մահմեդական երեխայ գողացել եւ մկրտել են, կամ գցում էին վանքի գաւիթումը մի մահմեդականի սպանուած դիակ: Այն բաւական էր գրգռելու մահմեդականների կատաղութիւնը. նրանք կամ կողոպտում էին քրիստոնեաների գիւղերը եւ կամ սպանուածի արեան փոխարէն նշանակում էին մի մեծ տուգանք: Ժողովուրդը պատրաստի փող չունէր. նա ստիպուած էր վեր առնել պարտքով: Եւ այնպիսի ծանր տոկոսներով վաշխառուն միշտ պատրաստ էր փող տալ, մանաւանդ որ նա ստանալու էր խիստ ապահով գրաւական, — այսինքն վանքի սրբութիւնները: Հրէայ կամ մահմեդական վաշխառուն գիտէր, որ իր պարտականը եթէ կինը, աղջիկը, տղան գրաւ դնէ, եթէ ժամանակին չկարողանայ վճարել, կասէ՝ տիրէ գրաւներիդ, իսկ իր եկեղեցական սրբութիւնը նա երբեք չի թողնի օտարի ձեռքում:

Երբեմն այսպիսի դժբախտութեանց պատճառ դառնում էին վանահայր աբեղաները կամ վիճակաւոր առաջնորդները: Նրանցից շատերը կաշառքներով իրանց կողմն էին գցում քուրդ, թուրք կամ պարսիկ իշխաննե-